«Հաստատում եմ»
ԵՊՀ պրոռեկտոր,
Ռ. Հ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

Հենրի Ազատի Մատինյանի՝ «Հայ-լեհական կապերը 1991-2018 թվականներին» Է.00.01 - «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Հաստատված է ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի 2024 թ. դեկտեմբերի 4-ի նիստում (արձանագրություն թիվ 5) նիստին մասնակցում էին Է. Գ. Մինասյանը, Հ. Բ. Գրիգորյանը, Ա. Ն. Հայրունին, Հ. Ժ. Հովհաննիսյանը, Գ. Մ. Բաղալյանը, Վ. Ա. Հակոբյանը, Ք. Ժ. Յախշյանը, Կ. Ա. Եղիազարյանը, Տ. Հ. Ղանալանյանը, Մ. Ա. Մալխասյանը, Տ. Կ. Գևորգյանը և ուրիշներ:

Հայաստանի անկախացումից հետո տարբեր պետությունների հետ ունեցած հարաբերությունների պատմության ուսումնասիրությունն ունի արդիական նշանակություն, քանի որ թույլ է տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության, այլ երկրներում Հայաստանի ազդեցության և այլ հանգամանքների մասին: Սույն թեկնածուական ատենախոսությունը նվիրված է հայ-լեհական կապերին 1991-2018 թվականներին:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը 215 էջ է:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ ներկայացված է թեմայի **արդիականությունը՝** ընդգծելով, որ այն կարող է օգտագործվել ավելի արդյունավետ քաղաքականություն վարելու նպատակով:

Ատենախոսության **գիտական նորույթը** կայանում է նրանում, որ առաջին անգամ համապարփակ աշխատությամբ ներկայացվում են հայ-լեհական կապերը 1991-2018 թթ.:

Առաջին գլխում, որը վերնագրված է «Հայ-լեհական քաղաքական կապերը 1991-2018 թվականներին» Հ. Մատինյանն անդրադառնում է ՀՀ և Լեհաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը, Հայաստանում Լեհաստանի ու Լեհաստանում Հայաստանի դեսպանատների բացմանը: Այնուհետև անդրադարձ է կատարվում երկկողմ քաղաքական այցերին: Առանձին ենթագլխով ներկայացված է Արցախյան հակամարտությունը և այդ հարցում Լեհաստանի Հանրապետության դիրքորոշումը: Առաջին գլխի շրջանակներում Հ. Մատինյանը խոսում է նաև Հայոց ցեղասպանության ճանաչման մասին: Կարևորելով լեհական մամուլի կողմից Հայոց ցեղասպանության լուսաբանումը՝ դրան նվիրել է առանձին ենթագլուխ:

Երկրորդ գլուխը վերնագրված է «Հայ-լեհական առևտրատնտեսական և ռազմական կապերը 1991-2018 թվականներին»: Ատենախոսը գրում է ՀՀ և Լեհաստանի Հանրապետության միջև տնտեսական կապերի, առևտրի դինամիկայի մասին: Հեղինակն ընդգծում է, որ այս բնագավառում կապերը մշտապես հետ են մնացել քաղաքական երկխոսության մակարդակից: Ռազմական համագործակցության շրջանակներում խոսվում է լեհական «Լյուբավա Արմենիա» ընկերության կարճատև գործունեության մասին:

Երրորդ գլուխը կրում է «Հայ-լեհական մշակութային և գիտակրթական կապերը 1991-2018 թվականներին» վերնագիրը: Այն բաժանված է երկու գլուխների: Այստեղ Հ. Մատինյանն անդրադառնում է մի շարք մշակութային միջոցառումների՝ լուսաբանելով դրանց համառոտ բովանդակությունը: Մեծ ուշադրություն է դարձվում գիտակրթական կապերին: Հատկապես խոսվում է Լեհաստանում բարձրագույն կրթություն ստանալու ՀՀ քաղաքացիների հնարավորությունների մասին: Անդրադարձ է կատարվում նաև Լեհաստանում հայագիտության զարգացման հիմնախնդիրներին:

Չորրորդ գլուխը ունի «Լեհաստանի հայ համայնքը 1991-2018 թվականներին» անվանումը: Սույն գլխում խոսվում է Լեհաստանում հայերի հաստատման մասին՝ արձանագրելով հատկապես 1990-ական թթ. այս երկիր զանգվածային ներհոսքը: Անդրադարձ է կատարվում նաև հայերի համարկման (ինտեգրման) խնդիրներին: Ընդգծվում է անօրինական միգրացիայի ու հանցավորության բավական բարձր մակարդակի հանգամանքը, որն հատկանշանական է անկախության շրջանում եվրոպական երկրներում հայերի հաստատման գործընթացներին:

Եզրակացությունում հեղինակն ամփոփ կերպով ներկայացնում է իր հետազոտության հիմնական արդյունքները:

Անկասկած, կատարվել է դրական ու գնահատելի աշխատանք, սակայն միևնույն ժամանակ ատենախոսությունում նկատելի են նաև թերություններ, որոնցից կարելի է նշել.

1. Աշխատանքը կշահեր, եթե իրականացվեին հարցազրույցներ հայ-լեհական կապերում ներգրավված անձանց հետ (այդ թվում դիվանագետներ, բայց ոչ միայն):
2. ՀԱԱ-ին հղումները, որոնք վերաբերում են այլ երկրների (ոչ Լեհաստանի) կողմից ՀՀ ճանաչմանն ավելորդ են: Արհեստական է նաև հղումը Մատենադարանի վավերագրին, որը վերաբերում է Լեհաստանում Հայ Առաքելական եկեղեցու կաթոլիկացմանը 17-րդ դ. վերջում, ինչը հայտնի փաստ է (կարելի էր օգտագործել գրականություն) և ուղղակի չի վերաբերում ատենախոսությանը:
3. Առաջին գլխի առաջին ենթագլխի զգալի մասը, երրորդ գլխի առաջին ենթագլուխը, ինչպես նաև աշխատանքի շատ այլ հատվածներ խիստ նկարագրական են, զգացվում է հեղինակի խոսքի ու վերլուծության պակաս:
4. Կան կրկնվող մտքեր, օրինակ Լեհաստանում ՀՀ դեսպանատուն բացելու վերաբերյալ Վ. Փափազյանի դիրքորոշումը կա և՛ առաջին գլխում (էջ 19) և՛ վերջինում (էջ 180 - 181):
5. Ավելի ճիշտ կլիներ վերջին գլուխը վերնագրել ոչ թե «Լեհաստանի հայ համայնքը 1991-2018 թվականներին», այլ Հայերը Լեհաստանում 1991-2018 թթ.: Համայնքը գրեթե ներկայացված չէ: Չնայած վերջում ասվում է, որ Լեհաստանում գործում են մի շարք հայկական կազմակերպություններ, ընկերություններ ու միություններ, բայց դրանց մասին չի խոսվում: Շատ ավելի մանրամասն էր պետք խոսել նաև Հայ Կաթողիկէ ու Հայ Առաքելական եկեղեցու մասին: Ընդհանրապես Լեհաստանի հայերի վերաբերյալ կարելի էր գրել առանձին ատենախոսություն, իսկ այս աշխատանքում ավելի տրամաբանական կլիներ ներառել միայն ՀՀ - ԼՀ կապերում լեհահայերի դերը:

6. Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկում (չնայած պետք է լիներ սկզբնաղբյուրների և գրականության ցանկ)՝ սխալ են նշված արխիվային ու պարբերական մամուլի տվյալները (արխիվի ու թերթի անունները բազմիցս կրկնվում են):

Ամբիոնը գտնում է, որ Հ. Մատինյանը կատարել է լուրջ և գնահատելի աշխատանք, համակողմանիորեն լուսաբանել հայ-լեհական կապերը 1991-2018 թթ.: Իր ընդհանրացումները նա ի մի է բերել «**Եզրակացությունում**»՝ բյուրեղացված տեսքով:

Որոշեցին-ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնը, ելնելով վերոհիշյալից, գտնում է.

ա) Հենրի Ազատի Մատինյանի «Հայ-լեհական կապերը 1991-2018 թվականներին» վերտառությամբ ատենախոսությունը հաջողված, պատմագիտական որոշակի արժեք ունեցող ուսումնասիրությունն է, որն օգնում է ամբողջական պատկերացում կազմել հայ-լեհական կապերի 1991-2018 թթ. պատմության մասին:

բ) Ատենախոսությունը բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին և հեղինակն էլ արժանի է իր հայցած Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

ԵՊՀ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ **Պ.Գ.Դ., ՊՐՈՖԵՍՈՐ Է. Գ. ՄԻՆԱՍՅԱՆ**

Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Է. Գ. Մինասյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Մ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
6.12.2024